А. Р. ИОАННИСЯН. *Неизданные произведения,* сост., автор пред. и ком. В. А. Погосян, Ереван, «Гитутюн», 2009, 188 с.

Ա. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Անտիպ աշխատություններ, *աշխատասիրությամբ՝ Վ. Ա. Պողոսյանի, Երևան, «Գիտություն», 2009, 188 էջ:*

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը պետական պատվերով լույս է ընծայել հայրենական ականավոր պատմաբան, ակադեմիկոս Աբգար Հովհաննիսյանի (1908–1991) անտիպ աշխատությունների ժողովածուն՝ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանի աշխատասիրությամբ:

Ինչպես նշվում է ժողովածուի առաջաբանում, Ա. Հովհաննիսյանը հոդվածներ տպագրելու հակում չի ունեցել, ուստի և օրինաչափ է, որ ցանկություն չի դրսևորել հրատարակելու միջազգային և համամիութենական գիտաժողովներին ներկայացրած իր ելույթների բնագրերը: Ա. Հովհաննիսյանի արխիվում հայտնաբերելով մի շարք անտիպ աշխատություններ, ինչպես նաև նրա գրչին պատկանող գրավոր կարծիքներ, Վ. Պողոսյանը կատարել է բծախնդիր ընտրություն և սույն ժողովածուի մեջ ամփոփել գիտական կարևորությունն ու այժմեականությունը պահպանած նրա գործերը:

Ժողովածուում ընդգրկված նյութերը ռուսերեն ու ֆրանսերեն են և ուղեկցվում են Վ. Պողոսյանի ծանոթագրություններով: Հաշվի առնելով Ա. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունները՝ կազմողը ժողովածուի առաջին բաժնում զետեղել է XVIII-XIX դդ. ֆրանսիական հասարակական մտքի պատմությանը նվիրված հոդվածները և ելույթները, որոնք նվիրված են Ժ.-Ժ. Ռուսոյին, Շ. Ֆուրիեին, բաբյոֆական շարժմանը, ինչպես նաև XIX դ. առաջին կեսի ֆրանսիական սոցիալիստական շարժման վրա XVIII դ. ֆրանսիական հեղափոխության ազդեցությանը:

Ժողովածուի երկրորդ բաժնում ամփոփված են Ա. Հովհաննիսյանի՝ հայ ժողովրդի XVIII-XIX դդ. պատմությանը նվիրված հոդվածները և ելույթները: Դրանց մի մասում գիտական բարձր մակարդակով քննարկվում են XVIII դ. հայ ազատագրական շարժումների, Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պատմության հիմնահարցերը: Մանրակրկիտ ուսումնասիրելով խորհրդարանական գաղափարների թափանցումն Արևելք, Ա. Հովհաննիսյանը Շահամիր Շահամիրյանի խմբակի գործունեության և 1770–1780-ական թվականներին Մադրասում մշակված սահմանադրության նախագծի մանրակրկիտ վերլուծության հիման վրա հավաստել է, որ այն եղել է Արևելքում «սահմանադրական-խորհրդարանական բնույթի առաջին քաղաքական ծրագիրը» (էջ 99): Առավել ևս կարևոր է, որ ժողովածուում զետեղված է նաև այս հոդվածի ֆրանսերեն թարգմանության համառոտ տարբերակը:

Խիստ արդիական ենք համարում Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պատմական նշանակությանը՝ 1978 թ. Ա. Հովհաննիսյանի տված գնահատականը. «Մենք երբեք չպետք է մոռանանք, որ 150 տարի առաջ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հնարավոր դարձրեց հայ ժողովրդի հետագա սոցիալական ազատագրումը և ազգային վերածնունդը» (էջ 138):

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի ելույթներից մեկը՝ նվիրված հայ իրականության մեջ Փարիզյան կոմունայի արձագանքներին, որով նա 1971 թ. հանդես է եկել կոմունայի 100-ամյակի կապակցությամբ Փարիզում գումարված միջազգային գիտաժողովում: Ա. Հովհաննիսյանի հոդվածը մեր պատմագրության մեջ այս թեմային նվիրվա միակ ուսումնասիրությունն է:

Մենք, սակայն, ցանկանում ենք առանձնացնել ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի

կազմած «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի արժեքավոր ժողովածուի նախնական տարբերակի մասին Ա. Հովհաննիսյանի՝ դեռևս 1947 թ. գրած կարծիքը, որը ևս նորություն է մեր գիտական հանրության համար: Ի դեպ, Վ. Պողոսյանը հրատարակել է նաև թե(փաստաթղթերի այս ժողովածուի և թե(Ա. Հովհաննիսյանի կարծիքի մասին ակադեմիկոս Վլադիմիր Խվոստովի՝ արխիվում պահպանված գրավոր արձագանքը: Հաշվի առնելով ժողովածուի լույս ընծայման նախապատմության ուսումնասիրության կարևորությունը, Վ. Պողոսյանը, շարունակելով պրպտումները «Պատմաբանասիրական հանդեսում», վերջերս հրատարակել է Մ. Ներսիսյանի անձնական արխիվից դուրս բերված հետաքրքիր փաստաթղթեր, այդ թվում Ա. Հովհաննիսյանին հղած նրա նամակները, որոնք ևս շրջանառության մեջ է դրել առաջին անգամ: Այս վավերագրերը, Ա. Հովհաննիսյանի գրքում տպագրված նյութերի հետ, գիտական կարևորության առումով նպաստում են հայ իրականության մեջ Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված փաստաթղթերի առաջին ստվարածավալ ժողովածուի նախապատմության շուրջ մեր պատկերացումների ընդլայնմանը և հստակեցմանը:*

Հետաքրքիր է նաև ժողովածուի երրորդ բաժինը, որտեղ կազմողը հրատարակել է Ա. Հովհաննիսյանի ձեռագիր կամ տպագրված մի շարք աշխատությունների մասին պահպանված գրավոր կարծիքներ: Դրանց հեղինակները խորհրդային այնպիսի ականավոր պատմաբաններ են, ինչպիսիք են ակադեմիկոս Վյաչեսլավ Վոլգինը, պրոֆեսորներ Ալբերտ Մանֆրեդը և Վիկտոր Դալինը: Նպատակահարմար ենք գտնում Ա. Հովհաննիսյանի «Հեղափոխական-կոմունիստական շարժումը Ֆրանսիայում 1840–1841 թթ.» մենագրության ձեռագրի մասին Վ. Դալինի կարծիքից կատարել մի հղում, որը պարզորոշ բացահայտում է գրքի հեղինակի՝ իբրև ֆրանսիական հասարակական մտքի պատմության խոշորագույն մասնագետի կշիռը. «Շատ կարևոր կլիներ ապահովել դրա (գրքի – Մ. Կ.) թարգմանությունը ֆրանսերեն լեզվով: Ֆրանսիացի պատմաբանները դրանից շատ նոր բաներ կիմանային: Այս գրքի լույս ընծայումը ցույց կտար խորհրդային պատմագիտության գերազանցությունը Ֆրանսիայի և նրա սոցիալական մտքի պատմության ուսումնասիրության ասպարեզում» (էջ 171):

Ժողովածուի այս բաժնում զետեղված են նաև Ա. Հովհաննիսյանին ուղղված՝ խորհրդային անվանի պատմաբաններ ակադեմիկոս Նիկոլայ Դրուժինինի, պրոֆեսոր Անատոլի Ադոյի անձնական նամակները, որոնցում տրվում են նրա «Կոմունիստական գաղափարները Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին» մենագրության գիտական բարձր գնահատականները: Հետաքրքրական է ակադեմիկոս Եվգենի Տարլեի նամակը, որտեղ նա շատ բարձր կարծիք է հայտնել Ա. Հովհաննիսյանի հայ ազատագրական շարժման պատմության գրքի մասին. «Հենց նոր ստացա «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը XVIII դարում» ձեր աշխատությունը: Արդեն հպանցիկ իսկ ծանոթությունը թողնում է շատ հետաքրքիր և պատկառելի աշխատության տպավորություն: Կկարդամ այն անհապաղ» (էջ 172):

Դրանք բոլորը, ինչպես նաև Ա. Հովհաննիսյանի՝ Ա. Մանֆրեդի գիտական հարուստ ժառանգության մասին գրած կարծիքը (էջ 75-78)՝ վերջինիս թեկնածությունը հետմահու ԽՍՀՄ պետական մրցանակի ներկայացնելու առիթով, վկայում են Ֆրանսիայի պատմությամբ զբաղված խորհրդային պատմաբանների գիտական սերտ համագործակցության ու բարեկամության մասին:

Կարելի է միայն ողջունել սույն ժողովածուի լույս ընծայումը, որը Վ. Պողոսյանն իրականացրել է իրեն բնորոշ բարեխղճությամբ, բծախնդրությամբ և գիտական բարձր պատասխանատվությամբ:

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ